This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at `http://books.google.com/`

B 1,211,604

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Լ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՈՒԽՈՒՑ

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՒԽԻԱՑ ԵՒ ԱՐԷՃԻ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

2105

1919

Հայաստան Վրաստ. Հանրապետութեան Քաղաքն. Միու

Կարդացուած է 1919, Մայիսի 10-ի
Նուխայ և Արէշի Հայրենակց.
Միութեան երեկոյթում
և քաղած ամենանոր աղբիւրներից

ՏԻԿԻՆՆԵՐ ԵՒ ՊԱՐՈՆՆԵՐ,

Երկար չը պիտի գրաւեմ ձեր ուշադրութիւնը։ Պարզ Յուցիկ մի քանի տպաւորութիւններ միայն մի օտարանի, որ համաշխարային պատերազմի օրերին, Եւրոպան խոշոր մի քաղաքից ելնելով, երեք ամբողջ տարի ըընկալուեց Կովկասի գաւառական մի փոքրիկ անկիւնում, որտեղ հիւրասէր և այնքան սիրալիր մի բուռը հայ հարակութեան մէջ։

Այդ փոքրիկ անկիւնը Նուխին է։ Ելախ կայարանից վերստ դէպի հիւսիս, Կովկասեան լեռների առաջին Յայի լանջին հանգչած։

Նուխին անյայտ քաղաք չէ կովկասցիների համար, նրան և փոքր ու երկրի խուլ կողմերում ընկած լինի։ Տնտեսագործութեան կենտրոններից մէկն է եղել երկար ժամանակ, ունի վաճառականական անցեալ և առևտրական ուսաստանում ծանօթ է այնպէս, ինչպէս Պրուսա քաղաքը Փոքր Ասիայում։

Թաթարաբնակ մի փոքրիկ վայր է այն, որ, ըստ մեր ստմագիրների, հիմնուել է 7-րդ դարի վերջերին և ունի կոչուել է Շաք. (Թուրքերէն՝ Շաքի)։

Հայերը եկուոր են այնտեղ։ Գաղթել են Արցախի կողմից, Ագուլիսից և Խոյից։

Մինչև անցեալ 1918 թիւը 6—700 տուն էին հաշուում, ունէին երկու եկեղեցի, դպրոցական երկու լաւ շէնք, մի հասարակական գրադարան և հայկական ակումբ։

Այժմ—չը գիտեմ։ Եթէ թաթարական վերջին վայրագութիւնները քաղաքում թողած չը լինեն ոչև է հաստատութիւն – զարմանալի չի լինիլ։

Մետաքս, կաղին ու բուրդ—ահա Նուխւայ առևտուրի և արտածութեան գլխաւոր նիւթերը։ Մեր աղդակիցները այնտեղ մեծ մասամբ զբաղուում էին շերամապահութեամբ, ունէին մետաքսի թել պատրաստող գործարաններ և բաւական լաւ ոնտեսութիւն։

Արհեստաւոր ու վաճառական էին ամէնքը։ Պաշտօնեայ՝ շատ քիչ կար, բանւորութիւնը մետաքսի գործարաններում բաւականաչափ, աղքատութիւնը աճեցուն, հարուստները—սակաւ։ Չէին մնացել։ Ճանապարհների հաղորդակցութեան դժւարութիւնները և զանազան ծանր հանգամանքները հետզհետէ դադարեցնում էին առևտուրն ու տաժանելի դարձնում ապրուստի միջոցները։ Առևտուրը մի կերպ քարշ էր գալիս՝ իր անցեալ մեծութեան աւերակների վրայ։

Այդպէս էր 1914 ի վերջերը, երբ ես մտայ այնտեղ։

Ապա, հետզհետէ, հանգամանքները աւելի բարդեցին, պատերազմը իր ձեռքը ծանրացրեց ամէն ինչի վրայ... Իսկ այժմ, թաթարական վայրագութիւնները այնպէս են քայքայել, այնպէս աւերածութեան մատնել ամէն ինչ, որ դրականապէս կարելի է ասել, թէ Նուխւայ մէջ արդեւ փակ հայ ազգաբնակութիւնը իր ճգնաժամն է ապրում սովի և դարհուրանքի ճիրաններում...

«Les Turcs ont passé par là»—«Թիւրքերն են անցել այդ տեղերով».—ասել է Վիքտոր Հիւգոն. «Ես...—աւելացրել է մեծ բանաստեղծը,—ամէն ինչ աւերակի են վե-

Ցիրաւի, անցան թիւրքերը և ամեն ինչ աւերակի ոխեցին։ Ու նրանց հարազատ յաջորդները այժմ, այն տարրը, որ երբէք չը սիրեց կարծես կուլտուրական գանքը և չի կարողանում հաշտուել նրա տարրական պահանջների հետ. այն տարրը, որ միմիայն քանդել, աղտոտել ամայացնել գիտէ իր շուրջը—սանձարձակ արշաւելու ողնուած այդ անտէր վայրերում, աւերակների է փոխում հայ ցեղի դարևոր տնտեսութիւնը և արիւնով ողողում շրջակայքը...

Նուխին, երբ ներս ես մտնում քաղաք, թողնում է ոտ խղճալի տպաւորութիւն։ Չէի հաւատում որ քաղաք ն այն։ Թւեց մի մեծ գիւղ։ Մի միակ մեծ փողոցը, որ ճուղին է, քաղաքի սրտի մէջ, իր աջ ու ձախ կողմերում, ճիւղաւորուած է նեղլիկ, աղտոտ, ցեխոտ և մթին բուղիներով ու փակուղիներով։

Իսկական թաթարական բնակավայր։ Աղբն ու աղտը նմիջապէս տների կողքին դիղացած ու փողոցների մէջ խուռած, իւրաքանչիւր քայլիդ փոսեր, քանդուածքներ, ելելի ջրակոյտեր, անձրև օրերին՝ ճահիճի ընդարձակ ակներ, ցեխը՝ մինչև ծնկներդ, մածուցիկ, անելանելի, Ինելուն պէս—փողոցները խաւար ու անանցանելի, իսկ երեկին՝ ամեն կողմ, խանութների առաջ, տների պատերի տակ կկզած, փողոցների անկիւններում կանգ առած՝ ճուռոտ, արևակէզ ու թշւառ դէմքեր, բազարում, «ղանարի» մեծ կշեռքի տակն ու շուրջը՝ ցնցոտիապատ, կարտանաւոր հագուստով այլանդակ թաթար ու լեզգի բաղուութիւն, թաթարական ղզելի չայխանաներ ամեն քայլիդ, ոպա և թաթարական վայրերից անպակաս՝ փողոցային ներ ամեն կողմ...

Հայկական, համեմատաբար շատ աւելի մաքու

աւելի խնամած թաղից եթէ վճռես երբևիցէ ելնել դէպի թաթարական թաղերը, դէպի բերդը տանող փողոցից աջ ու ահեակ ծուելը պիտի համարես ուղղակի անհնար։ Կեղտն ու աղբակոյտերը այդ կողմերում շրջապատել են թաթարական տուն ու փողոց այն աստիճանի առատութեամբ, որ մարդ ակամայից յիշում է նախապատմական շրջանները, երբ մարդիկ, վայրենութեան մէջ, մաքրութեան հասկացողութիւնից բոլորովին զուրկ, կերածի բոլոր մնացորդները նետում—դիզացնում էին իրենց կողքին և ապրում այդպիսի աղբակոյտերի գարշահոտութեան մէջ...

Սակայն, երբ հայկական թաղն ես մտնում, և կամ աւելի լաւը, երբ մի քանի քայլ միայն անելով՝ ելնում ես անտառոտ բլուրներից մէկի լանջին և այնտեղից նայում քաղաքի համայնապատկերին—այն ժամանակ արդէն բոլորովին այլ տեսարան է պատկերանում աչքիդ առաջ։

Ցիրաւի շատ գեղատեսիլ է Նուխին իր բռնած դիրքովն ու շրջակայքներով։

Մի ծայրը Կովկասեան լեռների առաջին լանջերին գոգաձև դէպի վեր պարզած, լեռնաբազուկների հովիտների մէջ մղած և ծործորների խորքերը տարածելով, իր միւս ծայրը իջեցրել է դէպի Ղուրուչայ գետակի լայնանիստ հեղեղատը և ամբողջովին, մանաւանդ ներքին իր մասովը, նման է ընդարձակ սիրուն պարտէզի՝ ծառախիտ, ծաղկալից ու ջրաշատ։

Աքանչելի է Նուխին մանաւանդ ապրիլին և մայիսին, երբ հայկական թաղն ամբողջ իր մէջ առած այգիները և և ամեն տան կից գտնուող սիրուն պարտէզները տերև են հագնում դալար ու սարսռուն, ծաղկում են ծառերը ծայրից ծայր՝ փարթամ գունազեղութեամբ, մանուշակը կապոյտ թաւշեայ գորգեր է տարածում բացատների վրայ... Ա՜խ, երբ ամեն կողմ ծաղկում են՝ սիրէնը, ժասմէնը, հիացինտներ առատօրէն, յորդ փթթումներով՝

ոանց միջից վարդի տեսակները, բազմազան, բազմագոյն անուշաբոյր, հետզհետէ լցնում են պարտէզ ու այգի, ոկ անտառի մէջ կարմիր և ճերմակ խոշոր բծեր են ոում մասրենու բազմաթիւ թփերը, ամեն ուղղութեամբ...

Ամեն Նուխեցի հայ, առանձնապէս հայ կինն ու մա- ուկը, առանց բացառութեան գրեթէ, անչափ սիրում է ոզիկներ, ունի մի անկիւն իր բագում, իր խրճիթի կողմ- ն, ուր նա տնկում է բազմաթիւ վարդենիներ նախ, ա- ս խնամում է ժամէնի թփեր, սիրենի ծառը, մարգերի ջ սիրով մշակում է ու պահպանում ամեն տեսակ ծա- կ առատօրէն, աղահաբար, մանրակրկիտ ուշադրու- ոամբ... Իւրաքանչիւր Նուխեցու տանը, լինի նա շքեղ ում աղքատիկ խրճիթ, դուք կը տեսնէք ծաղկամաններ ամուտներին, պատշգամների վրայ և գուրգուրանք դէ- պի ամեն ծաղիկ, մանաւանդ վարդն ու մեխակը...

Վարդ, վարդ... Ամբողջ քաղաքը մայիսին վարդի մի դարձակ բուրաստան է դառնում. ամեն պարտէզի մէջ ոմրին է տալիս, ամեն ձեռք վարդ է կրում այդ ամսին։

Ու զարմանալի էլ չէ, որ մայիսից սկսած, իրիկնա- մից մինչև կէս գիշեր, վաղ լուսաբացից մինչև երեկոյ, ոտէզների խորքերում, ստուերալից ծառերի խիտ տե- ների տակ՝ հնչում են հարիւրաւոր սոխակների այնքան այլելի, այնքան հոգեպարար դայլայլները։

Ամեն կողմից, ամեն տեղ, ամեն ծառի մօտ և ամեն- այլիդ վարդն է ու սոխակը...

Եւ զարմանալի էլ չէ, որ անտառում կամ պարտէզների ջ, հայկական թաղի իւրաքանչիւր փողոցում, ստիպւած ։ յաճախ կանդ առնել իրիկնագէմերին ու մթնաշաղին և ծանանանալ երկար, որպէս դի բաց չը թողնես սոխակի ն մի հրաշալի խաղը մեն մի աքանչելի դայլայլը։ Իսկ նտառի մէջ, պուրակի խորքում՝ շունչդ բռնած կծկւեք ծառի տակ ու ականջդ տալ քեզնից մի քանի

հեռու, նոյն իսկ ցերեկով, սուերների մթութեան մէջ, սիրուն թռչունին, որ իր երկնային սաղմոսն է գեղգեղում անվերջ կայլակումներով...

Նուխեցին, կին թէ տղամարդ, ոչ միայն սիրում է վարդն ու սոխակը, ծաղիկն ու երգը, այլ և սիրահար է ազատ բնութեան, անտառների և ծաղկալից դաշտերի։ Սիրում է անընդհատ եղնել—նստել պարտէզների մէջ, զետափին, կանաչ դալարիների վրայ, անտառի խորքերը։

Եւ դուք անընդհատ կը տեսնէք, ապրիլից մինչև ուշ սեպտեմբեր, թէ ինչպէս ամբողջ թաղը, ամեն տուն դադարկւում է դէպի մօտակայ պուրակի արահետներն ու բացատները, թէ ինչպէս այն դիմացի թեք և ընդարձակ կանաչ տարածութեան, Աղայեանց սարի վրայ, տարած իրենց սամաւարները, յաճախ ճաշն էլ, խումբ առ խումբ նստել են բազմաթիւ հայ ընտանիքներ, մանաւանդ կիրակի և տօն օրերին։ Մանուկները վազվզում են կամ դլորւում դալարիների վրայ, գոյնզգոյն հագուստներով աղջիկների երգերը լսւում են հեռուից, շրջապար են բռնել նրանք պուրակի ծառերի տակ, թառը կուրծքին դէմ ուած՝ ոգեւորութիւնով գեղգեղում է ձայն ունեցողը, օջախները մխում են բացատի կողերին, խորովածի շշերը պտտում են, սփռոցներ են տարածւել և բնութեան մէջ զւարճացողների ձայները հասնում են հայկական թաղի մինչև ծայրերը...

Հայ մանուկները, եթէ դպրոցում չեն լի օրերը և կամ երբ ճաշել են,—այլևս տանը չեն մնում, անտառի և թփուտների խորքերն են, բլուրների դագաթներին, զետափի ծառերի տակ, պարտէզների մէջ վազվզում։ Ընտանիքներն էլ յաճախ լուսաբացին, իրենց կաթսան ու ամանները առած, փոքրից մինչև մեծը դատարկւում են դէպի տանները, ուր մնում են ամբողջ օրը, ճաշում են, գորգկտում ու լւանում։ Շրջակայ բոլոր բլուրների

անջերից, ծործորների խորքերից, պարտէզների ծառերի ներքից օրն ի բուն լսում է մանուկների ուրախ ճիչերն և զարթ երգերը։

Իրիկնագէմին, վերադարձն է, ձեռքերնին ծաղկեփնջեր, թեերի տակ խոտ, ետևից գառը կամ հորթը։ Եթէ պտուղների ժամանակն է—պտուղի և բանջարեղէնի սառները մէջքերին, գլխների վրայ...

Ինչ որ ես միշտ մի առանձին նշանակութիւն եմ տուել և քաջալերելու ճգնել այնտեղ—դա Նուխեցի մանուկի բնածին սէրն է եղել դէպի այգեգործութիւնը և ստակապէս՝ ծաղկերուծութիւնը։

Ցիրաւի, ինչ կայ բնութեան մէջ ծաղկից աւելի սիրուն, աւելի աղնուացնող ու աւելի քնքոյշ։ Այնքան քնքոյշ սիրուն, որ նրա վրայ գուրգուրանքով է նայում ամենաստասիրտ մարդն անգամ։ Սիրել ծաղիկը, զմայլել նրա այնքան մեծ գեղեցկութեամբ, նրա այնքան նուրբ, այնքան կատարեալ շքեղութիւնով—դա է, որ յատկապէս պիտի սորացնել մեր մանուկներին.—դա է, որ առանձնապէս պիտի զարգացնել ու նրբացնել երեխաների սրտի մէջ, եթէ կայ մանաւանդ բնածին հակումն ևս։

Նուխեցի մանուկը, ծնւած վարգի, ծաղիկների և սոսակի դայլայլների մէջ, ոգևորւած սէր է տածում դէպի աղիկները։

Երբ ես ծրագրեցի դպրոցի բաղի մէջ գտնւող խոտան մի ընդարձակ տարածութիւնը վերածել կանոնաւոր աղկանոցի, բոլոր աշխատանքները սիրով յանձն առին դպրոցի աշակերտ—աշակերտուհիները։ Խոպան հողը բահեցին, մաքրեցին, կանոնաւոր մարդերի բաժանեցին, իմ ուցմունքներովը ձևաւորեցին, ուղիներ բաց արին, ծաղկեցուր շինեցին, ապա՝ աղպեցին, ցանեցին, տնկեցին ու ջրեցին և մինչև ամառւայ վերջը ամեն րոպէ աշխատել էին ուզում ծաղկանոցի մէջ։ Չէին ուզում

դասամիջոցներին։ Ուղղակի խնդրում, աղաչում էին, որ թույլ տամ իրենց՝ ծաղկանոց մտնելու և աշխատելու։ Եւ ահա ամեն օր, կէսօրից յետոյ, յատկապէս ջրելու էին գալիս մարգերը, քաղհան անելու—7-ից մինչև 16 տարեկան աշակերտ—աշակերտուհիները, ամենքը, աշխատանքը իրար ձեռքից խլելով...

Ծաղկանոցը բաց էր, ծաղիկները ծաղկած՝ զմայլելի կերպով դունաւորել էին մարգերը... բայց աշակերտներից ոչ մէկը չէր կոխոտում կամ քաղում։ Ո՛չ միայն աշակերտ, այլ դրսից մտնող մանուկ, տղամարդ, թէ կին՝ ձեռք չէին տալիս ոչնչի։ Ամենքը, առանց այդ մասին յայտնուած անդամ լինելու իրենց, գիտակցում էին թէ այդ ամենը դպրոցինն է, հասարակաց սեպհականութիւնը, ուրեմն և նիւրական ու անձեռնմխելի...

Եւ յիրաւի, դէպի դպրոցն ու հասարակական հիմնարկութիւնները տածած պատկառանքն ու սէրը, որքան ես նկատեցի երեք տարուայ ընթացքում, սակաւ բացառութեամբ, արմատացած է իւրաքանչիւր Նուխեցու մէջ՝ փոքրից մինչև մեծը։ Դպրոցի որև է սեպհականութիւն փչացնելը համարուում է մեծ մեղք. դպրոցին պէտք է տալ՝ ինչ կարող ես։

Դրա մէջ անձամբ համոզուել եմ ես, երբ պէտք է եղել գիմել հասարակութեանը կամ պարտէզի ու մեղուանոցի, կամ գրադարանի և ներկայացումների համար։

Ամենաժլատ մարդու քսակը բանալ յաջողուել է ինձ. յաջողուել է նրանց այգիներից և պարտէզներից ամբողջ տունկեր, ծառեր ու թփեր բերել դպրոցի պարտէզը. պէտք եղած ժամանակ շատ հեշտութեամբ, առաջին իսկ առաջարկի վրայ՝ դրամ են տուել կամ աւաղանի շինութեան, կամ բազի նորոգութեան և կամ այլ հասարակական նպատակների համար։

Ասեմ, երեք տարուայ ընթացքում, դպրոցա-

ան աճող, մեծացող բիւդջէն մի՛շտ կարելի եղաւ լրա-
ելի դիւրութեամբ, ուսուցիչները ամեն ամիս կանոնա-
ը ստացան իրենց ռոճիկները, երբ պէտք ունէին դրամի՝
մի անգամ չը մերժուեցին աւանսներ, իսկ դպրոցի և
ա պարտէզի վրայ արուած բոլոր ծախսերը, առանց դժ-
սրութեան, հայթայթուեցին։

Ու երբ ես թողի Նուխին, 1917-ի վերջերին, դպրոցն
ոդէն ունէր մի ճոխ դրադարան 5000 կտոր գրքերով,
նդիքական փոքրիկ կաբինետ, սիրուն փոքրիկ թատերա-
ում և սրահ՝ մշտական աթոռներով և լուսաւորութեամբ,
ուշնամուր, գեղեցիկ պարտէզ ծաղկանոցով ու աւազա-
վ, մեղւանոց, ուղղակի հասարակաց զբօսավայր դարձած
դարձակ, աւազապատ ծառուղիներով բաց, մաքուր և
կիկ դասարաններ և փոքրիկ ձմեռային մի ծաղկանոց
ելի քան 70—80 ծաղկամաններով։

Այդ ամենը նուիրեց և շինեց, սիրով հայթայթեց ժո-
ովուրդը, սովորեց ինքն էլ ամեն օր, ամեն կիրակի մա-
սանդ, գալ դպրոցի բաղը, հանգչել դրուած նստարան-
երի վրայ ծառերի տակ, շադրանով բուրաստանի դի-
աց և գուրգուրանքով նայել իր ստեղծած գործին։

Այդպէս էր Նուխեցին և այդպէս մնաց նա։ Սովորու-
իւն դաձաւ այլևս, որ իւրաքանչիւր մեռելատէր մի-մի
ումար նուիրէր դպրոցին և Բարեգործ. ընկերութեան։
արսանիքի և խնջոյքի մէջ ևս չէին մոռացւում դպրոցն
ը աղքատները։ Դրսում, օտար երկիրներում եղած Նու-
եցիները նուիրաբերում էին ինքնաբերաբար և կամ առա-
ին իսկ դիմումի վրայ. իւրաքանչիւր ներկայացում, բացօ-
եայ զբօսանք և կամ «մի բաժակ թէյ», տալիս էր լաւ
կամուտ և այդպիսի օրերը մի-մի տօնի օրեր էին հա-
արւում Նուխեցի հայի համար։ Դպրոցի բակը լցւում էր,
ոաժշտութիւնը հնչում զւարթութեամբ—պապենական
ւռնան և սրինգը—ու ոչ ոք դուրս չէր գնու

կան հիմնարկութիւնից՝ առանց նուիրաբերելու նրան ինչ կարող էր...

Զը պէտք է սակայն կարծել թէ ուսուցիչասէր այդ հայայնքը զերծ էր պակասութիւններից։

Ո՛չ։ Կային և այլանդակ պակասութիւններ, որոնք արդէն սովորական էին դարձել։ Նախ՝ այն անվերջ ու ղզուելի բանբասանիրութիւնը, որ կանանց միջից ելնելով՝ վարակում էր նաև տղամարդկանց։ Յետոյ՝ ընդհանուր համաճարակը, թղթախաղը, որ փոքրից սկսած մինչև մեծը, մանաւանդ կանանց, պառաւ թէ ջահել, որդիների տէր թէ ազատ, աղջիկ թէ նորահարս՝ հայակել էր գլխովին։

Ոչ մի տուն, ոչ մի կին չը կար համայնքի մէջ, որ չը խաղար։ Ամեն օր յատուկ երեկոյթներ—միմիայն լօտօի և թղթախաղի համար։ Միմիայն այդ։ Եւ այդպիսի սեղանների շուրջը զարմանալի գիւտեր էին տեղի ունենում բանբասական, հրէշաւոր ստերի շարքեր էին յօրինւում, որոնք և հետևեալ օրը պտոյտներ էին դործում ամբողջ քաղաքում ու դրաղեցնում պարապորդների։

Իհարկէ, այդպիսի երևոյթների պատճառները բացատրել կարելի էր այլև այլ կերպով։ Կարելի էր նաև արդարացնել նրանով, որ սովորական բաներ էին գաւառական խուլ անկիւնների համար։ Սակայն, ինձ գոնէ, շատ խորթ էր թւում տեսնել՝ թէ ինչպէս ամեն տան մէջ, ամեն քայլիդ և ամեն օր բացւում էին կանաչ սեղանները, կամ լօտօյի շուրջն էին շարւում հանդիսաւորապէս ամենքը և յաճախ մինչև կէս գիշեր, նոյն իսկ մինչև լոյս՝ խաղաթները կլանում էին ընդունակ և ինտելիգենտ մարդկանց ու ժամերը...

Այդ ամենին, կրկնում եմ, Կովկասի

ուառական քաղաքների հայ համայնքների մէջ Նուխին աչքի էր ընկնում իր ջերմ վերաբերմունքով էպի հասարակական հիմնարկութիւններն ու գործիչները, իր լաւ, սրտաբաց հիւրասիրութիւնով, այլև իր ին զարթ կենսունակութեամբ, որ միշտ շարժուն է ահել այդ փոքրիկ համայնքը. այն ժիր, եռանդուն գործունէութեամբ, որ կարողացել է փոքր ի շատէ բարեկեցիկ կեանք և ծաղկած տնտեսութիւն ստեղծել թաթարական միջավայրում...

Նուխեցին, ճշմարիտ է, ունեցել է իր մէջ շատ կատ աղքատներ, որոնց նա խնամել է և օգնել միշտ, ոնց համար նա իր նպաստները երբէք չի խնայել. պերազմը թէև նուխեցիներից շատերին թշուառացրեց և՛ ուելի, բայց նա իր յոյսը չէր կորցրել վերականգնելու տնտեսութիւնը, սպասումներ ունէր ապագայից, երազում ։ նոյն իսկ դպրոցը գիմնազիայի վերածելու, դպրոցական ը շէնքը վերջացնելու, կիսատ մնացած թատերական եղ սրահը լրացնելու, ծրագրում էր՝ գաղութը բարելաչու և զարգացնելու ամեն կերպ, երկաթուղու գծի հատ դիմումները անելու... եթէ, եթէ միայն վրայ չը հասին այն սև օրերը, երբ թուրքերը անցան այդ կողմերով, ամեն ինչ արիւնի և աւերակների փոխարկեցին, ստատակ հայկական գիւղերը կոտորեցին շրջակայքում և մնացրդ անօթի բազմութիւնը լցրին գէպի քաղաք...

Եւ ահա այժմ, Նուխեցի հայը թաթարական վայրագութիւններից երբևիցէ ազատուելու յոյսը կորցրած ապրին, ոչ մի հեռանկար չունի իր հայրենիքի վերականգնման հասնելու։ Այժմ նա հեռանալ, մինչիայն հեռանալ է ուզում իր դժոխք դարձած հայրենիքից։ Այժմ ոչ բնութիւնն հրապուրում նրան, ոչ այն վարդագոյն բուրաստանները և հարթաւոր սոխակների գայլայլները, որոնք — [illegible]

Նուխուայ բոլոր պարտէզների և անտառների մէջ. այլևս ոչ իսկ դպրոցն է աչքին գալիս և կամ որևէ այլ հիմնարկութիւն։ Դող ի սիրտ, ամեն րոպէ կոտորուելու սպառնալիքի տակ, կծկւած ու սմքած իրենց տների խորքերում, անկարող՝ համարձակօրէն փողոց անգամ ելնելու, քաղաքից մի քայլ դուրս գնելու—սպասում է Նուխեցի հայը այն օրերին, երբ պիտի կարողանայ մի կերպ դուրս գալ քաղաքից, ազատուել թաթարական կոշմարից, իր կինն ու որդին կորզել մահուան գրկից, անձը ազատել գազանական ճերաններից...

Իսկ սովը, իսկ անօթութիւնը, որին դատապարտուած են կոտորածից ճողոպրած ու այժմ պաշարուած մի բուռը հայերի թշուառ մնացորդները քաղաքում։ Չէ՞ որ Նուխայ և Արէշի մէջ աւելի քան 50 հայ հարուստ գիւղեր կային, աւելի քան 60000 բարեկեցիկ հայ բնակչութիւն։ Իսկ այժմ, այդ 50-ից մնացել է միայն երեք գիւղ, 60000-ից միմիայն 30000 բնակիչ և այն—ամենքն էլ սոված, մերկ, գերի ընկած, անընդհատ բռնութեան և բռնաբարութեան ենթարկուած, հայ աղջիկներն ու կանայք թաթարների ձեռքերում, թաթարական կենդրոններում փախցրած հայ կանանցից և աղջիկներից անառականոցներ հիմնած, հեռուն՝ անընդհատ, կոտորելով, քաղաքի մէջ ոչ մի առևտուր, ոչ մի գործ, գիւղերից փախստական հայեր լցած անօթի, հիւանդ ամեն կողմ...

Ո՛չ, Նուխեցին այլևս միմիակ երազ եթէ ունի—հեռանալն է թաթարական կոշմարային միջավայրից. հեռանալ՝ թողնելով թէկուզ ամեն ինչ...

Ա՛յն, ինչ որ «Երիտասարդ թիւրքերը» Արևմուտքում գործադրեցին հայ աղգաբնակութեան վրայ, որպէս [redacted] իրենց մնար սիայն—այն ահա կատարւում [redacted] հարազատ ժառանգ Ադէրբէյջանի հասարակ[redacted]մեր աչքի առաջ՝ մինչև այժմ ան

պատիժ ու անարգել։ Սպանում են մեզնից երկու քայլ հեռու, թալանում են, բռնաբարում, սովի մատնում, ամայացնում և ջնջում—ու չկան դեռ ևս այն ձեռքերը, չը կայ այն արդարութիւնը, որ վերջ տային այդքան դարհուրելի հրէշութիւններին և կորզէին՝ ոչնչացման ենթարկւած մեր ազգակիցների մի բուռը մնացորդներին։

Ներեցէք ինձ, տիկիններ և պարոններ, որ այքան տխուր եմ վերջացնում իմ տպաւորութիւնների այս կը-տորը։ Այդպէս է սակայն դրութիւնը։ Ողբերգութիւնը հայ ազգի՝ դեռ շարունակում է արիւնոտ ու սոսկալի։ Թէ երբ կը վերջանայ—չեմ կարող ասել։

Առ այժմ մեր բոլոր ջանքերն ու սեւեռուն մտածութիւնները պիտի կենդրոնանան մեր ցեղակիցների վերջին փշրանքները ժողովելու, մեր որբացած ապագայ սերունդը փրկելու և այս-այն կողմ դեռ ևս թաթարական ճիրանների մէջ արիւնքամ լինող թշւառներին ազատելու վրայ միայն։

Առ այժմ—կրկնում եմ այդ և շեշտում յատկապէս։ Զը ուսաբեկւենք ոչ մի բոպէ։ Հեռու չէ արշալոյսը։ Թէև տանջւած ու վիրաւոր, թէև արիւնքամ ու վշտալից—սպասենք Լուսածադին, որ չը պիտի ուշանայ երևալու։

Մեզ հալածողներն ու մեզ նահատակող վոհմակները կանգ են առել երեկւայ իրենց յոյսերի վրայ. մեզ ջնջելու և ոչնչացնելու յոյսերի։ Բայց երեկը արդէն մեռել է այսօրւայ արշալոյսին։ Այսօրն ու վաղը մերն է։ Զանանք ձեռք տալ մեր ցեղակիցների յոգնած ու վիրաւոր բեկորներին, որպէս զի նրանք ևս մեզ հետ ողջունել կարողանան Վաղւայ Արևածագը։

Այդ է ահա, որ կուզէի ես ներշնչել այսօր և վաղը՝ ձեզ և ամէնքին...

ԴՐՈՒԹԻՒՆԸ
ՆՈՒԽԻԱՑ ԵՒ ԱՐԷՑԻ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

Այսպէս ուրեմն, մօտ 20—25 հազար հայերը, բեկորները միայն 60 հազարից աւելի հայ ազգաբնակութեան, ստրկացրած ու ճորտացրած՝ արդեւլափակ մնում են Նուխի և Արէշ գաւառներում, թաթարների ձեռքերի մէջ։

Այսպէս ուրեմն, յիսուն հայաբնակ գիւղերից, թուրքական ու թաթարական կոտորածների ու հալածանքների շնորհիւ, մնացել են այժմ միմիայն երեք գիւղեր այդ գաւառներում, որոնցից երկուսի մէջ ուտիացիներն են (Վարդաշէն և Նիժ), իսկ միւսը՝ կիսաաւերակ մի ողորմելի գիւղակ (Ճալէթ)։

Մնացած բոլոր գիւղերի հայերը ոչնչացրած, տեղահան արուած ու վռնտած իրենց հողերից, մեծ մասամբ գերի են վարուել դէպի թաթարական գիւղերը և գտնուում են, բառացի կերպով, ճորտութեան ու ստրկութեան մէջ։

Նրանց հողերն ու տները, նրանց արտերն ու պարտէզները, որոնք այժմ ինքնաբոյս կերպով առատ հունձ [illegible] տանում, որովհետև անցեալ տարի հացահատիկը ժո[illegible] լինելով թափուել, բուսել է,—այդ արտերը ահա, [illegible] թաթարների ձեռքը։

[illegible]ուկ ու տղամարդ քշուել՝ մտրակների տակ, [illegible]ա, գործում են թաթարների համար, ակը-

ում են, գրաստների պէս բանեցնում։ Կանանցից ու աղ-
կներից գեղեցիկներին հարեմներն են տարել և կամ նրան-
ց պոռնկատներ հաստատել թաթարական զանազան ան-
ններում, տգեղներին բանեցնում են՝ իբրև ստրկու-
ների, իսկ մանուկներին, մի առանձին նախանձախնդրու-
համբ, թլպատում են ու մահմեդականացնում...

Ինչով է պակաս սա Թիւրքիայից, բուն-օսմանցիա-
ն դրծելակերպից։

Եւ այդ բոլոր վայրագութիւնները քաղաքակիրթ աշ-
արհից ծածկելու, որև է տրտունջի ձայն խլացնելու
ածութեամբ, կատարելապէս կտրել են տանջւողների
վաց որև է հաղորդակցութեան միջոց։ Փոստ ու հեռա-
ը մանրակրկիտ գրաքննութեան տակ, ճանապարհները
ւկած՝ սպանում են դուրս ելնել կամեցող հայերի և
ւկման մէջ պահում բոլոր ուղիները։

Հայը այդ գաւառներում՝ գտնւում է անընդհատ տեր-
ի, անընդհատ սպառնալիքի տակ և չի համարձակւում
ւէ ձայն, որևէ բողոք բարձրացնել, եթէ չի կամենում
այդ բողոքի փոխարէն սպանւի ինքը, իւրայիններն ու
ցեղակիցները։

Այդպէս էր Էնվէրեան երկրի կեանքը վերջին չորս
ուայ ընթացքում, այնտեղ-Օսմանեան աշխարհի մէջ։ Այդ-
ս է այժմ, Դաշնակիցների քթի տակ, Թիֆլիզից մի քանի
ղ միայն հեռու, Նուխւայ, Արէշի, ինչպէս պատմում են,
նպէս և Շամախիի ու Գօքչայի գաւառներում։ Այնտեղ,
Թուրքն է անցել. այնտեղ, ուր թաթարն է տիրում
վայրագ բնազդներով, իր անզուսպ մոլեգնութեամբ։

Զը պիտի կարծել սակայն, որ Ազէրբէյջան կոչւած
ուշարանքի այդ նոր երկիրներում միմիայն թաթարական
ութիւնն» է գործողը և կամ «կրօնամոլական
սդը»։

Ինչպէս բազմաթիւ փաստերը ակներև են կա

նում, այդ երկրի մի ծայրից դէպի միւսը անընդհատ շրջում են, ժողովրդին գրգռում, նորից թուրք տիրապետութեան յոյսերով մոլեգնացնում՝ Օսմանեան երկրի այն գործակալներից, որոնցից մի քանի խմբեր արդէն գործի վրայ են Փոքր Ասիայում, արդէն փոքրիկ կոտորածներով սպառնալից ապագայ են խոստանում հայերի ու քրիստոնեաների համար։

«Երիտասարդ թուրքերի» ոչ կուսակցութիւնն է մեռել ու անգործ նստել և ոչ էլ նրա պանիսլամական ձգտումները դադարել։ Օրէցօր և անպատիժ կերպով նրա առաքեալները մտնում են Կովկաս ամեն կողմերից, թափանցում են թաթարական վայրերը, անընդհատ գրգռման մէջ են պահում մահմեդական ժողովրդին, այն քարոզն են հնչեցնում, թէ թուրքը դեռ չի յաղթուել, էնվէրը դեռ կայ և թէ նրանք շուտով գալու են նորից Կովկաս ու մահմեդական մահիկի դրոշը տնկեն մինչև Կովկասեան լեռները...

Ունայն խօսքեր չեն սրանք։ Փաստեր կան։ Կան նոյն իսկ անուններ, որոնք տրւում են Նուխւայ, Արէշի և Շամախիի գաւառներից՝ իբր պանիսլամական գործիչների անուններ։ Պնդում են, որ կան զօրեղ ու եռանդուն գործող որջեր ևս Ազէրբէյջանի գլխաւոր կենտրոններում, ազդեցիկ հովանաւորողներ այդ երկրի բարձր շրջաններում...

Եւ դա շատ հաւանական է, որովհետև գաւառներում յայտնի կերպով հայահալած դիրք են բռնել՝ ոչ միայն որոշ խմբեր ու անձեր, այլ նոյն իսկ տեղական կառավարութեան գործակալներն ու վարիչները։

Վկայ և փաստ թող լինեն դրան՝ Վարդաշէնում տեղի ունեցող սոսկումներն ու թալանները, (տես «Աշխատաւոր» № 24 և 95)։ Վկայ և փաստ թող լինեն թաթարական գիւղերի տարուած հազարաւոր հայերի գրաստային դրու

թիւնը, այս ու այն կողմը հաստատած պոռնկատները հայ կանանցից, հարեմների մէջ տառապող հայ աղջիկները, մահմեդականացրած հայ մանուկները... որոնցից ոչ մէկի ճիչն ու բողոքը ուշադրութեան չեն առնւում, որոնց մասին եղած գանգատներն ու պահանջները մնում են անհետևանք, ենթարկւում են ծաղրի...

Եւ այդ ամենը ոչ միայն չի նւազում, այլ աւելի ու աւելի, օրէցօր աճեցուն՝ առանց քաշւելու գործադրւում է Ազէրբէյջանի կառավարութեան աչքի առաջ, մեծ կենդրոններում ու կատարելապէս անպատիժ։

Այժմ—չոր փաստեր միայն։ Չոր, բայց շատ պերճախօս։ Կցկտուր կը լինեն դրանք, բայց հաւաստի աղբիւրներից են քաղւած և յաճախ՝ իրենց—թաթարների իսկ բերանից։ Չը պէտք է ենթադրել որ չը կան նրանց մէջ գութ և խիղճ ունեցող մարդիկ, որոնք հոգով վրդոված չը լինեն չափազանց և քաջութիւն չունենան ճշմարտութիւնը խոստովանւելու... երբեմն։

«Բոլոր գիւղերում, հայ կնայք և օրիորդները, ինչպէս և տղամարդիկ, մի փոր հացով ծառայութեան մէջ են թաթարների մօտ։ Նրանցից շատերին արդէն իսլամացել են և շարունակում են նոյն «աստւածահաճոյ գործը»։ Նիժ, Ճալէթ և Վարդաշէն գիւղերը ապրում են ճորտութեան մէջ։ Ստրաժնիկները տէր և տնօրէն են այնտեղ։ Չը կայ ոչ մի պաշտպանութիւն՝ նոյն իսկ պատւի... Թալանում են, գՁլում՝ զանազան պատրւակներով։ Իսկ ստամոքսները լցնելու համար, մտնում են անարգել ամեն մի տուն և ստանում, ինչ ցանկանում են։ Ընդհանուր պատկերը կոշմարային է»։

«Հաւաքած տեղեկութիւնների համաձայն՝ ճորտացրած հայեր գտնւում են շատ գիւղերում։ Տրւում են ան-

որոնք ժողովում են իրենց մօտ հայ կանանց, բռնաբարում են և բռնաբարել տալիս, ապա իբր ստրկուհիներ բանեցնում...

«Թրքական ապքէրներ և սպաներ շատ կան գիւղերում մնացած և շարունակ գրդռում են ամբոխին՝ հայերի դէմ։ Դրանք նոյն իսկ պահում են գերի հայ օրիորդներ և տանջանքներով բռնաբարում։ Անունները կան մի առ մի։ Ցայտնի են ամէնքը։ Զեն էլ թագնւում։ Ինչից և ումից պիտի վախենան։ Զէ՞ որ հայկական կոտորած սարքող «բարեպաշտ իսլամներ» են նրանք և կարող են վայելել իրենց թալանածներն ու փախցրածները»։

«Ընդհանուր թալանից և կոտորածներից Նուխայ և Արէշի գաւառներում մնացել են փոքր ի շատ է ազատ՝ Նուխի քաղաքը, ապա Վարդաշէն, Նիժ և Ճալէթ գիւղերը միայն։

«Վարդաշէնում կան 600 տուն ուտիացի հայեր, 300 ուտիացի—վրացիներ կամ ուղղափառներ, նոյնքան էլ պարսկական հրէաներ։ Հարստութիւն հայերի մէջ՝ գրեթէ չի մնացել։ Կային յայտնի հարուստներ, որ այժմ մուրացիկների են փոխուել։ Վարդաշէնը սակայն, եղել է հարուստ գիւղ ամբողջ գաւառում։ Գիւղացիք իրենց հաշուով հեռագրական կայան էին հաստատել և փոստ հիմնել։ Ո՛չ մի տուն չը կայ այժմ, որ ազատուած լինի թալանից։ Կան տներ, որոնք կորցրել են մինչև հարիւր հազարի արժողութեամբ գոյք։ Տնական կահ-կարասիք, գիւղատնտեսական պարագաներ և տաւար չը կայ այլևս։ Չի մնացել ոչ մի ձի։ 600 տան համար կայ այժմ միմիայն 20 զոյգ լծկան։ Գարնանը՝ Ազէրբէյջանի կառավարութիւնը գիւղին տուել էր 30 լծկան, սակայն բոլորն էլ բաժանուել է ուղղափառ գիւղերին միմիայն։ Հայերին՝ ոչ մի հատ։ «Ուղղա

փառ» ուտիացիները և հրէաները ոչ մի վնաս չեն կրել»։

«Ապահովութիւնը այդ կողմերում կարելի է եղել փոքր ի շատէ հաստատել միմիայն այս մայիսին և Վարդաշէնցիք փորձում են փոքր ինչ աշխատելու ելնել այգիներում և ցանելու մօտակայ արտերը։ Հեռաւոր և բեղմնաւոր բոլոր հողերը անցել են թաթարների և «ուղղափառ» ուտիացիների ձեռքը։ Հայը չի յանդգնում դէպի այդ հողերը գնալ»։

«Ճալէթում եղել է 200 տուն հայ։ Ամենաաղքատ գիւղն է։ Գիւղացիները դլխովին քայքայւել են ու թալանւել։ Բոլորովին զուրկ են երկրագործական պարագաներից և տաւարից։ Գիւղից դուրս ելնելու ոչ մի հնարաւորութիւն չունէին երկիւղից։ Նորերս միմիայն սկսել են աշխատանքներ՝ մօտակայ այգիներում և դաշտերում։ Աշնանը և ձմեռը անպայման կերպով նրանք մատնւելու են սովի, եթէ որևէ տեղից նրանց օգնութիւն չը հասնի»։

Նիժ գիւղում առաջ եղել են 900 տուն հայ։ Այժմ մնացել է հազիւ 750։ Մնացածները կամ ոչնչացել են և կամ տեղահան եղել։ 1918 թւի յուլիսից մինչև հոկտեմբեր ամիսների ընթացքում չի դադարել սպանութիւնը այդտեղ։ Կոտորել են գիւղի երիտասարդներից՝ աւելի քան 300 հոգի։

«Նիժը այդ շրջանի ամենահարուստ գիւղն է եղել, բայց բոլոր տները ենթարկւել են թալանի։ Զանազան պատրւակներով թալանն ու կողոպուտը շարունակւում է նոյն իսկ մինչև այժմ։ Յուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Նիժը ստիպւած է եղել թրքական զօրագնդին տալ օրական՝ 20 եզ, 20 ոչխար, 50 հաւ և վառեկ, 150—500 փութ ալիւր և հաց, 2 փութ իւղ, շաքար, թէյ, աղ, սոխ և այլն։ Միմիայն սեպտեմբերի վերջերից էր, որ թուրքերը սկսեցին իրը թէ վճարել... Իրենց գնահատած արժէքովը։ Կան գիւղացիներ, որոնք մուրացկ

փոխուել։ Եւ յիրաւի, ինչպէս մուրացիկ չը դառնայ այն գիւղացին, որ մի տարուայ ընթացքում տալիս է թալան՝ մօտ 170,000 բուբլու արժողութեամբ բոլոր ունեցածը»։

«Նիժը սակայն, չը նայելով իր կրած սոսկումներին, համեմատաբար ամենից աւելի է օժտուած փոքր ինչ ևս ապրելու, եթէ միայն միջոցներ ունենայ աշխատանքի ձեռնարկելու և պարբերական թալաններից ու սարսափներից ազատ մնալու»։

...«Ամենազարհուրելի վիճակը՝ թաթարական գիւղերի մէջ եղած փախստական հայերի վիճակն է։

«Մեծ քանակութեամբ հայեր, առանձնապէս կին և մանուկ, անցեալ տարուայ կոտորածների և յարձակումների ընթացքում գերի են քշուել։ Նրանցից շատերին բռնի կերպով իսլամացրել են։ Կանանց թշուառացրել են, լլկել ու բռնաբարել, իսկ տղամարդկանց ճորտացրել ու բռնի աշխատանքների լծել։

«Շատերին յայտնի է այդ ամենը, գրեթէ ամենքը գիտեն գերուածների տեղը, ազգականները մղկտում են իրենց դժբաղդ կանանց և աղջիկների համար, սակայն մինչև այժմ եղած բողոքներն ու դիմումները մնացել են ու մնում են անհետևանք և անլսելի»։

«Այդպիսի դիմումները մնում են անպատասխան այն մտքով, թէ կինը կամ աղջիկը ամուսնացել է և ըստ մահմեդական օրէնքի, չի կարելի բաժանուել ամուսնուց. իսկ մանուկների մասին—թէ նրանք շատ լաւ են ապրում մահմեդականների մօտ»։

«Չը կայ գրեթէ փախստական և գիւղերից տեղահան արուած հայ այդ կողմերում, որ դերութեան մէջ չունենայ իր ազգականը կամ մօտիկը»։

«Վերադարձ դէպի իրենց գիւղերը—փախստականներ-թոյլատրուում։ Միայն մի քանի գիւղերում ար-

մանով, որ ինչ հնձեն և ժողովեն, կէսը տան թաթարներին»։

«Գիւղերում դեռ մնում են անթաղ՝ կոտորածների օրերից մնացած մարգկային ոսկորների և դանգերի կոյտեր»...

«Կան գիւղեր, որոնց արտերը անցեալ տարի հնձւած չը լինելով, այժմ բուսել են և առատ բերք են խոստանում, սակայն տէրերին ոչ մի կերպով չի թոյլատրւում օգտւել այդ արտերից։ Ուր որ թաթարները կամենում են, կառավարութեան հաճութեամբ, տէր են գառնում հայերի արտերին, այգիներին և տներին։ Կայաբաշի գիւղի հողերն ու այգիները, օրինակ, 50,000 բուբլիով տրւած է թաթարներին, մինչդեռ միմիայն այգիներից իւրաքանչիւրը կը տար այդքան եկամուտ։ Այդ գիւղը այն թշւառ վայրերից մէկն է, որ դլխովին ջարդի է ենթարկւել։ Ո՛չ մի տուն այլևս։ Աւերակներ միայն։ Եւ միակը չէ այդ դիւղը։ Յաճախ կարելի է հանդիպել վայրի խոտերի մէջ ծածկւող խրճիթների մնացորդների, փլած տանիքների ու պատերի և ամայացած գիւղերի, որոնցից թալանողները դեռ մինչև այժմ էլ կրում-տանում են գերան, դուռ, լուսամուտ և ամեն ինչ, որ կարելի է ծախել ու գործածել»։

«Նուխայ հովիտում յաճախ է մարդ հանդիպում անմշակ ու անտէր մնացած արտերի և այգիների, որոնք հետզհետէ յափշտակւում են թաթարների կողմից»։

«Ռուսական գիւղերը, օրինակ՝ Ալէքսէեվկա, Նեկրասովկա, 1917 թւին, գուշակելով լինելիքը, ծախել էին իրենց տները հայերին գլխաւորապէս և գաղթել դէպի Ռուսաստան։ Այդ գիւղերը այժմ ամայացել են, որովհետև այնտեղի հայերն էլ փախել են կամ ջնջւել»...

Ազերբէյջանի կառավարութեան տակ անցնող այդ երկիրը մի տարուայ ընթացքում ահա թէ ինչպիսի կերպարանք է ստացել.—

...«Քայքայումը ակներև է և երթալով՝ աւելի է շեշտւում։ Խճուղիները կատարելապէս անպէտքացել են, իսկ անձրևների ժամանակ՝ այլևս անանցանելի են դառնում։ Նուխի—Եալախեան այն սիրուն ու կոկիկ խճուղին, որ հիացնում էր անցորդներին, այժմ սոսկալի փլատակների, փոսերի, ճահիճների և ջրակոյտների տարածութիւն է դարձել։ Հեռագրական դծերը, օրինակ՝ Վարդաշէնից—Նիժ և դէպի ուրիշ կէտերը, որոնք ձգած էին գիւղացիների միջոցներով, այժմ լիովին ոչնչացել են։ Վարչութիւնները տգէտ, սաստիկ անշնորհք և յանցաւոր, կառավարութեան ներկայացուցիչները—անկարող։ Առ հասարակ ամեն քայլին ակներև են դառնում անկարգութիւնն ու ապօրինութիւնները։ Զգալի կերպով ծնունդ է առնում և հաստատւում ճորտատիրութիւնն ու ստրկութիւնը։ Ժողովրդի բնաւորութիւնը սկսում է փոխւել։ Դա նկատելի է նոյն իսկ առաջին հայեացքով։ Մահմեդականները վարժւում են քմահաճոյքի և բռնութեան ոգիին, որ առ այժմ նրանց հնարաւորութիւն է տալիս դիւրութեամբ հարստանալու և ապրելու։ Հայերը սկսում են համոզւել, որ մնացել են անպաշտպան, որ գրեթէ դուրս են հանւած օրէնքի հովանաւորութիւնից... և հետզհետէ վարժւում են ստրկութեան, դարձել են վախկոտ, խորամանկ ու ողորմելի...»

«Վերականգնում է խանական ու չաւուշական ոգիին։ Օրէցօր, ժամ առ ժամ գրեթէ, քայքայւում է կուլտուրական այն կեանքը, որ հաստատւելու էր եկել այդ կողմերում՝ տարիներից ի վեր...»

Կը այդպիսով, փոխւում է ուրեմն բուն Թուրքակ

աշխարհի, ուր խարխլուում է քաղաքակրթական ամեն ձեռնարկութիւն, քայքայուում է տնտեսութիւնը և ուր խաւարն ու տգիտութիւնը, քմահաճոյքն ու բռնութիւնները շուտով դառնալու են սովորական երևոյթներ։

«Les Turcs ont passé par là !»—«Թուրքերն են անցել այդ կողմով», ասել է մեծ բանաստեղծը։ Անցել են և ամեն ինչ աւերակի վերածել...

Թուրքն է հաստատուել այդ կողմերում։ Հաստատուել է—և ամեն ինչ աւերակի ու ճահիճի վերածել, ամեն ինչ բռնութեան ու քմահաճոյքի զոհ դարձրել։

Մի անգամ ևս արգարանում են բանաստեղծի խօսքերը։ Եւ այն՝ մեզանից միայն մի քանի քայլ հեռաւորութեան վրայ, քաղաքակիրթ աշխարհի աչքի դիմացը, անմիջապէս նրա կողքին...

Սակայն ժամանակն է վերջ տալու այլևս այդ ամենին ու մի անգամ ընդ միշտ փրկելու մեր ցեղակիցներին այդպիսի դժոխային տիրապետութիւններից։

Ժամանակ է՝ ազատել մեր թշուառ հայրենակիցների վերջին բեկորները, որոնք կորցրել են ամեն յոյս՝ երբևիցէ բարեկեցիկ օր ունենալու այդ կողմերում և որոնք կուզէին, անչափ կուզէին ելնել ու հեռանալ այդ գեհենից, ելնել ու փախչել թաթարական մղձաւանջից։

Ժամանակ է մանաւանդ փրկելու 30,000-ից աւելի հայ ազգաբնակութեանը՝—սարկացման մէջ ձեռք բերուող վատասերումից ամեն տեսակ գարշելի յատկութիւններից և տանել փոքր ինչ շունչ առնելու նրան մեր հայրենիքի երկնքի տակ, ուր կարող լինէին մարդու պէս ապրել և մոռանալ այնքան մեծ, այնքան ծանր տառապանքները...

1919. Մայիս 20.

ՄԻ ՔԱՆԻ ՎԿԱՅԱԹՂԹԵՐ

I

Նուխու գաւառի Վարդաշէն գիւղի հայ ազգաբնակութիւնը հետևեալ խնդրագիրն է ուղարկել Ադրբէջանի պարլամենտի հայկական ֆրակցիային.

«Ինչպէս ձեզ յայտնի է, Նուխու, Սևանի և Արէշի գաւառների հայկական գիւղերն աւերակների են վերածուել, ազգաբնակութեանը կոտորել և միայն Նուխու գաւառի Վարդաշէն, Նիժ ու Ճալէթ գիւղերն են, որ թէև աւերածութիւնների են ենթարկուել, սակայն ազգաբնակութեան միայն մի մասն է կոտորուել։ Թւում էր, որ տաճկական զօրքերի հեռանալով, ազգաբնակութիւնը պիտի ազատ շունչ քաշէր. սակայն, ընդհակառակը, դրութիւնը ոչ միայն չլաւացաւ, այլ վատթարացաւ։

Նուխու գաւառի ոստիկանական 3-րդ շրջանում Վարդաշէն կենտրոնով։ կարգը պահպանելու համար ոստիկանապետի տրամադրութեան տակ են դրուած 30 ստրաժնիկներ, որոնք ոչ միայն իրենց պարտականութիւնները չեն կատարում, այլ և թալանում են ազգաբնակութեանը՝ քաղցի մատնելով նրանց։ Բողոքել չենք կարողանում, որովհետև բողոքողները սոսկալի պատժի են ենթարկւում։ Ստրաժնիկների մեզ ժօտ նշանակելու օրից նրանք ապրում են մեր հաշւին։ Այսպէս՝ գիւղացիներից պահանջում են խոտ, քուսպ, գարի, փայտ, հաց, ձու, իւղ, բրինձ, թռչուններ և այլն։ Ով կամովին չէ տալիս, սոսկալի ծեծի է ենթարկ-

Փոքր ի շատէ ունևորներից խոշոր գումարներ են պա-

և չվճարողներին ծեծի ու բանտարկութեան ենթար-

պահանջւած գումարն ստանալը։ Գիւղերները մը-

ում են բնակարանները և ամեն ինչ կողոպտելով, տանում հետ-
երը։ Սրան կամ նրան պատուիրում են փարթամ խնճոյք սար-
ել։ Կանանց ու օրիորդներին բռնաբարում ու տանում են
տները։ Ուրիշ վայրերից գործով եկած ստրաժնիկներին տե-
սնում են մասնաւոր տներում որպէս հիւրերի, որոնք վերա-
սնալուս տանում են իրենց հետ ամեն ինչ։ Գիւղում ան-
կատակ հրացանաձգութիւններ են կատարում ազգաբնակութեան
ահաբեկելու նպատակով։ Լուրեր են տարածում, որ Վար-
աշէնը հրի ու սրի է մատնուելու,. որով և ազգաբնակութեանը
անգարում են իրենց աշխատանքները կատարելու, որովհետև
ոանք չգիտեն, թէ վաղն ինչ է լինելու։ Դատ են կայացնում
գործը վճռում յօգուտ կաշառատուի ու իրենց վճիռներն էլ
կատար ածում։ Կատարում են մի շարք այլ քստմնելի գոր-
ծեր ևս։

Այս ամենի մասին մենք բողոք ենք ներկայացրել պարլա-
մանտին Նուխու գաւառի ներկայացուցիչ Ղարիբ-Քերիմ օղլու մի-
ջոցով, յոյս ունենալով, որ նա ևս իր ձայնը կը բարձրացնի յօ-
գուտ մեզ։

Հաղորդելով վերոյիշեալների մասին, խոնարհաբար խնդրում
ենք, յանուն մարդասիրութեան, գործակցեցէք, ուր հարկն է դի-
մելու և վճռական միջոցներ ձեռք առնելու մեզ այս անելանելի
դրութիւնից դուրս գալու, որպէսզի գիւղացիութիւնը կարող լինի
զբաղուել իր աշխատանքներով ու դատապարտուած չլինի կո-
տորեան։ Իսկ եթէ այդ անհնար է, ազաչում ենք գաղթեցնել
մեզ մի ապահով վայր»։

(41 հոգու ստորագրութիւն)։

Վաւերացրել է Վարդաշէն գիւղի տանուտէրը՝ իր ստորա-
գրութեամբ ու կնիքով։

1919 թիւ. 25 ապրիլի։

(«Աշխատաւոր» № 83, 1919 թ.)

II

Մի տարուց աւելի է, որ հայերը Նուխու և Արէշի գաւա-
ռում ենթակայ են թալանի, կոտորածի նոյնիսկ դա-
ում հակառակ իրենց կամքի, մահմեդականութիւն

նում... «կամք» ասուած բանը՝ հայի համար չէ. նա ճորտ է թուրք բէգի ձեռքին և մինչև հիւանդանալը, եղան նման աշխատում է «մի փոր» հացի համար։ Հազարաւոր հայ կանայք մինչև այսօր էլ թուրք գիւղերում ենթակայ են բռնաբարման... Այս օրերս Դահնա գիւղից (Նուխու գաւառ) մի հայ էր եկել, որը պատմում էր, թէ դեռ հիմա էլ՝ շատ հայ կանանց բռնի իսլամութիւն են ընդունել տալիս և սա միայն Դահնայում չէ, այլ բոլոր տեղերում։ Թուրք գիւղերից գալիս են քաղաք «անպէտքացած» կանայք ու գաղթականական կոմիտէից օգնութիւն խնդրում. կոմիտէի հարցին՝ ամուսին ունե՞ն արդեօք, պատասխանում են, որ վաղուց են իրենց ամուսնուն կորցրել. բայց և այնպէս՝ բոլորն էլ յղի են լինում... Հայ կնոջ պատիւը արատաւորուած է և դեռ շարունակւում է այդպէս մնալ։ Ո՞ւր է այն մարմինը, որին վիճակուած է ազատել հայ կնոջը այդ գերութիւնից և հայ գիւղացուն ճորտութիւնից. մի՞թէ հիմա էլ, երբ մեր երկրումն են կուլտուրական աշխարհի մեծ պետութիւնները, հայ կինը պիտի բռնաբարուի, իսկ հայ գիւղացին ճորտ մնայ թուրք բէգի մօտ։ Մինչև ե՞րբ պիտի լռեն մեր ազգային հիմնարկութիւնները, մինչև ե՞րբ պիտի անտես անեն Ադրբէջանի պարլամենտի հայկական ֆրակցիան և Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչը։ Հազարաւոր հայեր դեռ մինչև օրս ցրուած են զանազան թուրք գիւղերում և ոչ-ոք չի մտածում դրանց մասին. մինչև ե՞րբ պիտի շարունակւի այս դրութիւնը, մինչև ե՞րբ պիտի հայը գերի մնայ թուրք բէգերի ձեռքին... Ժամանակ է վերջապէս հաւաքելու մարտիրոս հայ ազգի այդ դժբախտ բեկորները. լռելն ու անտես անելը յանցանք է...

(«Աշխատաւոր» № 95, 1919 թ.)

III

Արէշի գաւառի հայ գիւղերի կոտորածի ժամանակ Մեծ Սեօգութլու գիւղացի Ե. Խ.-ն Աղդաշեցի իր մի թուրք քիրւայի միջոցով ազատւում ու Աղդաշ է բերւում։ Երկար մնալով քիրւայի տանը և ականատես լինելով այդ շրջանի գերուած հայ կանանց ու օրիորդներին պատահած անպատիւ արարքներին, նամ է, որ թուրքերը հայ գիւղերի մէջ գտնուող բոլոր տղա

մարդկանց կոտորելուց, գիւղերը թալանելուց ու աւերելուց յետոյ, բոլոր գիւղերի գեղեցիկ կանանց ու հասուն աղջկանց քշուեն Աղդաշ։ Պաշտօնեաները իրենց հաւանածները վերցնելուց յետոյ, մի մասն էլ վաճառում են մուսուլմաններին՝ բղաւելով.— «գէօգչայ արւադ, գըզ», մարմնի զանազան մասերը ցոյց տալով գնորդներին... որպէս վաճառքի ապրանք, իսկ մնացածներից էլ տաճիկ պաշտօնեաների և դլխաւորապէս Արէշի գաւառի 3-րդ մասից պրիստաւ տխրահռչակ Մահմուդ բէկ Լիւթֆալիբէկովի խորհրդով, անառականոցներ են բացւում։ Թէև այս աղաղակոտ փաստի մասին շատ անգամ գրեցինք ու բողոքեցին մամուլի միջոցով ի դիտութիւն համայն աշխարհի և Դաշնակից պետութիւնների միջնորդութիւնը խնդրեցինք այս խեղճերին թրքական անխիղճ ու գազանային կրքերից ազատելու համար, սակայն մեր բողոքը միշտ էլ մնաց ձայն բարբառոյ յանապատի. և խեղճերը մինչև այժմ էլ տառապում, անարգւում ու բռնաբարւում են թուրքերի անառականոցներում։

Իսկապէս առաջներում նրանց ազատելու հարցը կապւած էր շատ մեծ դժւարութիւնների հետ. թուրքերը գերիներ ազատելու համար հայերից պահանջում էին մեծաքանակ գումարներ, ինչպէս այդ երևաց մօտիկ անցեալում մի քանի գերի կանանց ազատելու խնդրում։ Իսկ այժմ, չգիտեմ ինչից դրդւած, իրենք են առաջարկում հայերին գերիները յետ վերցնել, միայն նրանց տեղափոխելու ճանապարհածախքը վճարելով. իսկ եթէ գտնւի մի մօտիկ կենտրոնավայր, որտեղ կարելի լինի, առանց կողմնակի ծախքերի, տեղ հասցնել նրանց—թուրքերը սիրով համաձայնուում են այդ ծանրութիւնը իրենց վրայ վերցնել, ինչպէս մի քանի դէպք էլ պատահել է. օրինակ՝ շատ թուրքեր իրենց մօտ գտնւած գերի հայ կանանց ու աղջկանց տարել են Նիժ։

Ներկայումս այդ ուղղութեամբ անհրաժեշտ է մի հեղինակաւոր և ուժեղ դիմում Ադրբէջանեան կառավարութեանը և նրա կողմից մի խիստ շրջաբերական իր բոլոր պաշտօնեաներին։

(«Աշխատաւոր», 1919 թ. Յունիս 5.)

ՍՐՏԱԳԱՂԹԻ ԽՆԴՐԸ

Նուխայ և Արեշի, ինչպէս նաև Շամախիի և Գէլաղչայ գաւառների հայերի արտագաղթը դարձել է օրուայ հրատապ հարցը։ Ուրիշ ոչ մի հեռանկար վատատութիւն չի ներշնչում։ Ամէն ինչ ապացուցանում է, որ Ազէրբէյջանի թաթարական շրջաններում հայ ժողովուրդը այլևս կեանք վարել չի կարող։ Զսփաղանց արդէն ուժեղ են թիւրքական զորձակալների գրգռումները և տեղական կառավարութեան յանցաւոր զորձակցութեան փաստերը։

Այդ ամէնը ի նկատի առնելով է ասա, որ միաժամանակ, միմիանցից անկախ ձեռնարկութեամբ, թէ Բաքուի և թէ Թիֆլիսի Հայրենակցական Միութիւնները, հրապարակի վրայ են դրել վերոյիշեալ նահանգների հայերի արտագաղթի հարցը։ Այդ հարցը, ինչպէս հաղորդում են, պաշտօնապէս գրուած է արդէն Ազէրբէյջանի և Հայաստանի կառավարութիւնների առաջ և նրա լուծման համար սկսել են բանակցութիւնները։

Խնդիրը ձևաւորուած է մօտաւորապէս հետևեալ կերպով.—

Ազէրբէյջանի կառավարութիւնը պիտի անմիջապէս խիստ կարգադրութիւններ անի արձակելու այն հայ զէրիներին, որոնց ճորտացրած՝ աշխատեցնում են Նուխայ և Արեշի գաւառների թաթարական շրջաններում—Սա-

մուղ, Գէօյնիզ, Դաննա, Խաչմազ, Ալղաշ, Փադաւ և և այլն։

Գերեւածները և կամ մահմեդականացրածները պիտի ժողովուին և ուղարկուին որոշ կէտեր, այնտեղից զաղթեցնելու համար դէպի Հայաստան։ Ազէրբէյջանի կառավարութիւնը պիտի խիստ միջոցներ ձեռք առնի, որպէս զի թաթարները ապատ թողնեն պահած ու մահմեդականացրած հայերին։ Ազէրբէյջանի կառավարութիւնը պիտի հրաշխաւորի այդպիսիների կեանքի ապահովութիւնը։

Այդ նպատակով՝ պիտի յանձն առնի կառաբեալէս ապահովելու գաղթողների կեանքը՝ նրանց անցնելու բոլոր ճանապարհներին, թաղամասերի, տեղական պաշտօնեաների զեղծումների և աւազակախմբերի դէմ։

Ազէրբէյջանի կառավարութիւնը պիտի միջոցներ ձեռք առնի՝ հատուցանելու համար գաղթողների թողած գոյքի և տեղահանութեան փոխարժէքը, ինչ ձեւով որ որ յարմար կը համարի՝ պայմանաւորուելով Հայաստանի կառավարութեան հետ։

Այս բոլորը իրագործելու և արտադրելի վրայ հսկելու համար՝ չորս կէտերում (Նուխի, Զաքաթալա, Վարդաշէն և Նիժ) պիտի հաստատուեն խառն մասնաժողովներ (մահմեդական և հայ, Ազէրբէյջանի և Հայաստանի կառավարութիւնների ներկայացուցիչներ) որոնք և պիտի կազմակերպեն ու դեկավարեն գաղթելու գործը։

Ներկայացնելով վերոյիշեալ գլխաւոր կէտերը, Հայրենակցական Միութիւնները առաջարկել են փոխադրել բանակցութիւնները, քանի դեռ առաջներս ունինք մի քանի ամիս, որոնց ընթացքում կարելի պիտի լինի ժողովել ցանուցրիւ եկած թշուառներին և տեղաւորել առաջիկայ ձմեռայ համար։

Բացի Ազէրբէյջանի Նուխի, Արէշ, Ճամախի և Գէօղչայ գաւառներից, Վրաստանի սահմաններումն ևս ցանուցրիւ, անտուն և անտէր՝ մնում են տգեղաւոր հայրենակիցներ։

Նուխեցիներ և Արէշցիներ կան Ցարսկիյ-Կոլօդէց, Թելաւ, Սղնախ, Լագօդեխ և այլն, թւով մօտ 3000, դուցէ և աւելի։

Այդ բոլոր տեղական եղածները նոյնպէս, որոնք այժմ ապրում են կիսաքաղց, դոնից-դուռ ընկած և այս ու այն հաստատութիւնների տուած նպաստներով — այդ բոլոր տանջուածներն ու հալածուածները նոյնպէս սպասում են, որ գլուխ դնելու մի-մի անկիւն տրւի նրանց Հայաստանում, աշխատելու, գործելու, նստարաւորութիւն ստեղծւի նրանց համար և որ վերջապէս իրենք ևս կարողանան ուրախալ հայրենիք, ազատ՝ թաթարական մղձաւանջից, ազատ՝ դարհոր պարբերական հալածանքներից ու սոսկումներից։

Հայաստանի կառավարութեանն է մնում այդ հոգը և այդ մեծ, շինարար գործի ձեռնարկութիւնը։